Նախագահ
Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Խոսք տատանվող միսիոներին

Հիսուս Քրիստոսի աշակերտները միշտ ունեցել են Նրա ավետարանը աշխարհին տանելու պարտավորություն (տես Մարկոս ԺԶ.15–16)։ Այնուամենայնիվ, երբեմն դժվար է բացել մեր բերանները և խոսել մեր հավատքի մասին մեր շրջապատում գտնվողների հետ։ Մինչդեռ Եկեղեցու որոշ անդամներ բնատուր պարգև ունեն ուրիշների հետ կրոնի մասին խոսելու հետ կապված, մյուսները մի փոքր տատանվում են կամ անվստահ են զգում, ամաչում են կամ, նույնիսկ, վախենում դա անել։

Ելնելով դրանից, թույլ տվեք ինձ տալ չորս խորհուրդ, որոնց յուրքանչյուրն էլ կարող է հետևել՝ հնազանդվելու համար «ամեն արարածի» ավետարանը քարոզելու Փրկչի պատվիրանին (ՎԿՈՒ 58.64)։

Լույս եղեք

Իմ սիրած արտահայտություններից մեկը, որը պատկանում է Սբ. Ֆրանցիսին, հետևյալն է. «Քարոզեք ավետարանը բոլոր ժամանակներում և, եթե անհրաժեշտ է, օգտագործեք բառեր»։[1] Ասվածի մեջ ակնարկվում է այն հասկացողությունը, որ հաճախ ամենազորեղ քարոզները հնարավոր չէ արտահայտել բառերով։

Երբ մենք ազնիվ ենք և հետևողականորեն ապրում ենք մեր չափանիշներով, մարդիկ նկատում են դա։ Երբ մեզանից ուրախություն և երջանկություն է արտացոլվում, նրանք նկատում են նույնիսկ ավելին։

Յուրաքանչյուրն էլ ուզում է երջանիկ լինել։ Երբ մենք՝ Եկեղեցու անդամներս, ավետարանի լույսն ունենք մեր մեջ, մարդիկ կարող են տեսնել մեր երջանկությունը և զգալ Աստծո սերը, որ լցնում և հեղեղում է մեր կյանքը։ Նրանք ուզում են իմանալ, թե ինչու։ Նրանք ուզում են հասկանալ մեր գաղտնիքը։

Սա մղում է նրանց տալ նմանատիպ հարցեր. «Ինչո՞ւ եք դուք այդքան երջանիկ» կամ «Ինչո՞ւ դուք միշտ ունեք այդպիսի դրական վերաբերմունք»։ Այս հարցերի պատասխանները, իհարկե, կատարյալ առիթ են հանդիսանում Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի վերաբերյալ զրուցելու համար։

Զրույցի բռնվող եղեք

Կրոնի վերաբերյալ թեմա առաջ բերելը, հատկապես մեր ընկերների և սիրած էակների հետ, կարող է վախեցնող և դժվար թվալ։ Այն չպետք է այդպիսին լինի։ Մտերմիկ զրույցի ժամանակ հոգևոր փորձառություններ հիշատակելը կամ Եկեղեցու միջոցառումների կամ իրադարձությունների մասին խոսելը կարող է հեշտ և հաճելի լինել, եթե մենք ներդնենք մի փոքր քաջություն և առողջ դատողություն։

Իմ կինը՝ Հարրիեթը, այս առումով հրաշալի օրինակ է։ Երբ մենք ապրում էինք Գերմանիայում, նա եղանակներ էր գտնում ընկերների և ծանոթների հետ իր զրույցի ժամանակ առաջ քաշել Եկեղեցու հետ կապված թեմաներ։ Օրինակ, երբ ինչ-որ մեկը հարցնում էր

նրան հանգստյան օրերի մասին, նա ասում էր. «Այս շաբաթ մենք տպավորիչ փորձառություն ունեցանք մեր Եկեղեցում: 16-ամյա մի պատանի հրաշալի ելույթ ունեցավ մեր համայնքի 200 մարդկանց առջև մաքուր կյանքով ապրելու մասին»: Կամ՝ «Ես տեղեկացա մի 90-ամյա կնոջ մասին, ով կարել էր ավելի քան 500 վերմակներ և տվել էր մեր Եկեղեցու մարդասիրական ծրագրին, որ ուղարկվեին աշխարհով մեկ գտնվող կարիքավոր մարդկանց»:

Մարդիկ, ովքեր լսում էին այս, ավելի հաճախ ցանկանում էին իմանալ ավելին: Նրանք հարցեր էին տալիս: Եվ դա հնարավորություններ էր տալիս խոսել ավետարանի մասին բնական, ինքնավստահ, հաճելի ձևով:

Համացանց և հասարակական զանգվածային միջոցներ մուտք ունենալով՝ այսօր ավելի հեշտ է խոսել այս բաների մասին զրույցի միջոցով, քան երբևէ նախկինում: Այն, ինչ մեզ պետք է, պարզապես դա անելու քաջությունն է:

Եղեք շնորհով լի

Ցավոք սրտի, շատ հեշտ է անբարյացակամ լինելը: Շատ հաճախ է պատահում, երբ մենք վիճում ենք, նվաստացնում ենք և դատապարտում ենք: Երբ մենք բարկանում ենք մարդկանց վրա, կոպտում նրանց կամ վիրավորում, նրանք այլևս չեն ցանկանում ավելին իմանալ մեր մասին: Անհնարին է իմանալ, թե քանի մարդ է հեռացել Եկեղեցուց կամ երբեք չի միացել, քանի որ ինչ-որ մեկը ինչ-որ բան է ասել, որը ցավ է պատճառել կամ վիրավորել նրանց:

Այսօր աշխարհը լի է անքաղաքավարությամբ: Քանի որ համացանցը այսօր ապահովում է անվան գաղտնիությունը, ավելի քան երբևէ հեշտացել է համացանցում թունավոր կամ նյարդայնացնող բաներ ասելը: Չպե՞տք է մենք՝ մեր բարի Քրիստոսի հույսով լի աշակերտներս, ունենանք ավելի բարձր, ավելի բարյացակամ չափանիշ: Սուրբ գրությունները ուսուցանում են. «Ձեր խոսքը ամեն ժամանակ շնորհքով՝ աղով համեմած լինի, որ գիտենաք թէ ինչպէս արժան է ձեզ ամեն մէկին պատասխան տալ» (Կողոսացիս Դ.6):

Ինձ դուր է գալիս այն գաղափարը, որ մեր բառերը լինեն պարզ, ինչպես պայծառ երկինքը, և լի լինեն շնորհով: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպիսին կլինեն մեր ընտանիքները, ծխերը, ազգերը և նույնիսկ աշխարհը, եթե մենք կարողանանք ընդունել այս պարզ սկզբունքը:

Լցված եղեք հավատքով

Երբեմն մենք մեզ վրա վերցնում ենք չափից ավելի գովասանք կամ չափից ավելի մեղադրանք, երբ հարցը վերաբերվում է ուրիշների կողմից ավետարանն ընդունելուն: Կարևոր է հիշել, որ Տերը մեզանից չի ակնկալում դարձի բերելը:

Դարձի են գալիս ոչ թե մեր խոսքերի, այլ Սուրբ Հոգու երկնային ծառայությունների շնորհիվ: Երբեմն ընդամենը պահանջվում է մեր վկայության կամ փորձառության վերաբերյալ մեկ արտահայտություն, որպեսզի ընթացքի մեջ դրվի սիրտը փափկացնելը կամ դուռը բացելը, որը կարող է առաջնորդել ուրիշներին Հոգու հուշումների միջոցով վեհ ճշմարտությունների հետ կապված փորձառություն ունենալ:

Նախագահ Բրիգամ Յանգն (1801-77) ասել է, որ իմացել է, որ ավետարանը ճշմարիտ է, երբ «տեսավ մի մարդու, ով առանց պերճախոսության կամ տաղանդների կամ հասարակության առջև վարժ խոսելաձևի, ով միայն կարող էր ասել. «Սուրբ Հոգու զորությամբ ես գիտեմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, որ Ջոզեֆ Սմիթը Տիրոջ Մարգարեն է»»: Երբ Նախագահ Յանգը լսել է այդ համեստ վկայությունը, նա ասել է. «Այդ անհատից բխող Սուրբ Հոգին լուսավորեց իմ հասկացողությունը, և լույսը, փառքը և անմահությունը [հյտնվեցին] իմ առջև»:[2]

Եղբայրներ և քույրեր, հավատք ունեցեք: Տերը կարող է ուժ տալ ձեր ասած բառերին և զորեղ դաձնել դրանք: Աստված ձեզանից չի պահանջում դարձի բերել, այլ դրա փոխարեն բացել ձեր բերանները: Դարձի բերելու խնդիրը ձերը չէ, այն պատկանում է լսող անձնավորությանը և Սուրբ Հոգուն:

Յուրաքանչյուր անդամ միսիոներ է

Իմ թանկագին ընկերներ, այսօր մեզ համար շատ ավելի միջոցներ կան, քան երբևէ, որ բացենք մեր բերանները և ուրիշների հետ կիսվենք Հիսուս Քրիստոսի ավետարանի ուրախ լուրերով: Յուրաքանչյուրը, նույնիսկ տատանվող միսիոները, հնարավորություն ունի մասնակցելու այս մեծ աշխատանքին: Մեզանից յուրաքանչյուրն էլ կարող է ուղիներ գտնել օգտագործելու մեր որոշակի տաղանդները և հետաքրքրությունները, որ աջակցի

աշխարհը լույսով և ճշմարտությունով լցնելու մեծ գործին: Դա անելով, մենք կգտնենք ուրախություն, որը տրվում է նրանց, ովքեր բավականաչափ հավատարիմ և համարձակ են «կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում» (Մոսիա 18.9):

ՀՂՈՒՄՆԵՐ

1. St. Francis of Assisi, in William Fay and Linda Evans Shepherd, *Share Jesus without Fear* (1999), 22.
2. *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 67.

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Ուսուցանելու արդյունավետ եղանակներից մեկն է՝ «խրախուսել նրանց, ում ուսուցանում եք, նպատակներ . . . դնել, որոնք կարող են օգնել նրանց ապրել համաձայն այն սկզբունքի, որը դուք ուսուցանել եք» (*Teaching, No Greater Call* [1999], 159): Հրավիրեք նրանց, ում ուսուցանում եք, որ աղոթքով նպատակ դնեն այս ամիս կիսվելու ավետարանով մեկ կամ ավելի մարդկանց հետ: Ծնողները կարող են քննարկել եղանակներ, որոնցով կրտսեր երեխաները կարող են օգնել: Դուք կարող եք նաև օգնել ընտանիքի անդամներին նոր մտքեր առաջարկել կամ դերակատարել եղանակներ, որոնք կօգնեն առաջ քաշել ավետարանը սովորական զրույցի ժամանակ և մտածել Եկեղեցում սպասվող միջոցառումների մասին, որոնց նրանք կարող են հրավիրել իրենց ընկերոջը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Կիսվել ընկերոջ հետ

Ադրիանա Վասքեզ

Մի օր, մինչ սովորում էի իմ սեմինարիայի դասը, ունեցա մի գեղեցիկ և հստակ տպավորություն: Մինչ կարդում էի հաջորդ օրվա դասը, ես տեսա իմ դպրոցական ընկերներից մեկի դեմքը և ուժեղ զգացողություն ունեցա, որ ես պետք է կիսվեի նրա հետ իմ վկայությամբ:

Անկախ այս տպավորության հստակությունից, ես վախեցած էի: Ես անհանգստանում էի, որ իմ ընկերը կարող է մերժել ինձ, հատկապես այն պատճառով, որ նա Եկեղեցուն միանալու համար հետաքրքրություն ցուցաբերող աղջկա տպավորություն չէր թողնում:

Ես սկսեցի մտածել Երիտասարդ Կանանց գերագույն նախագահությունից Քույր Մերի Ն. Քուքի ելույթի մասին, որում նա կոչ է անում մեզ ջանասիրաբար աշխատել և քաջ լինել:[1] Ես ուզում էի այդպիսին լինել, ուստի ես նամակ գրեցի այդ աղջկան և վկայեցի Եկեղեցու ճշմարտացիության և Մորմոնի Գրքի հանդեպ իմ սիրո մասին: Հաջորդ օրը ես Մորմոնի Գրքի մի օրինակ իմ նամակի հետ միասին գաղտնի դրեցի նրա պայուսակի մեջ:

Ի զարմանս ինձ, իմ ընկերուհին շատ հեշտությամբ ըմբռնեց ավետարանը: Այդ օրվանից սկսած, նա պատմում էր ինձ, թե ինչ էր սովորում Մորմոնի Գիրքը ուսումնասիրելու ժամանակ: Մի քանի շաբաթ անց, ես նրան ծանոթացրեցի միսիոներների հետ: Գրեթե անմիջապես նա հաստատում ստացավ Սուրբ Հոգուց, որ այն, ինչ նա սովորում էր, ճիշտ էր: Միսիոներներն ու ես հուզվեցինք, երբ նա պատմեց մեզ իր զգացմունքների մասին: Իմ ընկերուհին շուտով մկրտվեց, և նրա ծնողները զարմանում էին, տեսնելով փոփոխությունները, որ տեղի էին ունենում նրա մեջ:

Ես այնքան երջանիկ եմ, որ կարողացա հաղթահարել իմ վախերը և օգնել, որ ավետարանը մուտք գործեր նրա կյանք:

ՀՂՈՒՄ

1. Տես Մերի Ն. Քուք, «Երբեք, երբեք, երբեք մի հուսահատվեք» *Լիահոնա,* մայիս 2010, 117–19:

ԵՐԵԽԱՆԵՐ

Ես կարող եմ լույս լինել ուրիշների համար

Նախագահ Ուխդորֆն ասում է, որ ուրիշների համար լույս լինելու համար մեր խոսքերը պետք է լինեն «պարզ, ինչպես պայծառ երկինքը, և լի լինեն շնորհով»: Մեր խոսքերը պետք է լինեն ուրախ, ազնիվ և բարի: Ի՞նչ կարող եք դուք անել կամ ասել, որ լույս լինեք ուրիշների համար: Դուք կարող եք ձեր օրագրում գրել հինգ հաճելի բաներ, որ նախատեսում եք ասել ընտանիքի անդամներին կամ ընկերներին:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/12: Թարգմանության հաստատումը. 6/12: *First Presidency Message, February 2013*-ի թարգմանությունը: Armenian: 10662 201

Դարձի եկած առ Տերը

Ուսումնասիրեք այս նյութն աղոթքով և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Եկեղեցու նոր քույրերը՝ նեռառյալ Սփոփող Միություն մտնող Երիտասարդ Կանայք, ակտիվության վերադարձող քույրերը և նորադարձները, այցելող ուսուցիչների աջակցության և ընկերակցության կարիքն ունեն: «Ներգրավված լինելը կարևոր է նորադարձներին պահպանելու և քիչ-ակտիվներին լիարժեք ակտիվության վերադարձնելու համար», - ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը: «Պատկերացրեք տեսլականը, որ Սփոփող Միությունը կարող է դառնալ ընկերակցում ապահովող ամենահզոր աղբյուրներից մեկը, որը մենք ունենք Եկեղեցում: Անհապաղ օգնության հասեք նրանց, ովքեր ուսուցանվել և կրկին ակտիվության են վերադարձվել, և սիրեք նրանց Եկեղեցում ձեր կազմակերպության միջոցով»:[1]

Որպես Սփոփող Միության անդամներ, մենք կարող ենք օգնել նոր անդամներին սովորել Եկեղեցում հիմնական գործունեության մասին, ինչպիսին են.

- Ելույթ ունենալը:
- Վկայություն բերելը:
- Ծոմապահության օրենքով ապրելը:
- Տասանորդ և այլ նվիրատվություններ վճարելը:
- Ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելը:
- Իրենց մահացած նախնիների համար մկրտություններ և հաստատումներ կատարելը:

«Հոգատար ընկերներ են անհրաժեշտ, որպեսզի նոր անդամները իրենց լավ և ընդունված զգան Եկեղեցում», - ասել է Երեց Բալլարդը:[2] Մենք բոլորս էլ, հատկապես, այցելող ուսուցիչները, կարևոր պարտականություններ ունենք՝ հաստատելու ընկերակցություններ նոր անդամների հետ, որպեսզի այդպիսով օգնենք նրանց հաստատապես «դարձի [գալ] առ Տերը» (Ալմա 23.6):

Սուրբ գրություններից

2 Նեփի 31.19–20, Մորոնի 6.4

Մեր պատմությունից

«Ունենալով նորադարձների թվի աննախադեպ աճ, - ասել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910–2008), - մենք պետք է ավելի ու ավելի շատ զգալի ջանքեր կիրառենք, որ աջակցենք նրանց, երբ նրանք փնտրում են իրենց ուղին; Նրանցից յուրաքանչյուրն ունի երեք բանի կարիք՝ ընկերոջ, պարտականության և «Աստծո բարի խոսքով» սնուցման (Մորոնի 6.4)»:[3]

Այցելող ուսուցիչների դերն է օգնել նրանց, ում այցելում են: Հաճախ նախ ընկերակցությունն է առաջ գալիս, ինչպես եղավ Սփոփող Միության մի երիտասարդ քրոջ հետ, ով ավելի տարիքով քրոջ այցելող ուսուցիչն էր: Նրանց մոտ դանդաղ էր հասունանում ընկերակցությունը, մինչև որ նրանք կողք կողքի միասին աշխատեցին մաքրություն կատարելու միջոցառման ժամանակ: Նրանք դարձան ընկերներ և երբ նրանք խոսեցին Այցելող Ուսուցիչների Ուղերձի մասին, նրանք երկուսն էլ սնուցվեցին «Աստծո բարի խոսքով»:

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն (1876–1972) ասել է, որ Սփոփող Միությունը «Աստծո արքայության կարևոր մասն է երկրի վրա և . . . օգնում է դրա հավատարիմ անդամներին հավերժական կյանք ձեռք բերել մեր Հոր արքայությունում»:[4]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. M. Russell Ballard, “Members Are the Key,” *Liahona,* Sept. 2000, 18.
2. M. Russell Ballard, *Liahona,* Sept. 2000, 17.
3. Gordon B. Hinckley, “Every Convert Is Precious,” *Liahona,* Feb. 1999, 9.
4. Joseph Fielding Smith, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 97.

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ես աղոթո՞ւմ եմ իմ զուգընկերոջ համար և խնդրում, որ Հոգին առաջնորդի մեզ, մինչ մենք կծառայենք մեր քույրերին:

2. Ի՞նչ եղանակներով ենք մենք ծառայում յուրաքանչյուր քրոջ, ում մենք այցելում ենք, որպեսզի նա իմանա, որ մենք իսկապես մտահոգվում ենք նրա համար:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են:Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/12: Թարգմանության հաստատումը. 6/12: *Visiting Teaching Message, February 2013*-ի թարգմանությունը: Armenian: 10662 201